

հետ պայմանագրութիւն կնքեցին: Bruce այդ մասին կը գրէ:

«Առեւտրական պայմանները նմանօրինակ քաջայերուծիւններ կուտային հայոց, ինչպէս որ արտօնուած էր՝ Սրբ Ճան Չայլաի յանձնարարութեանց մէջ, ի Պոմպէյ, սակայն աւելի մասնաշատկօրէն անոնց (այսինքն՝ Հայոց) առաջարկելու հարիւրին երեսուն շահ սկզբնական դինի վրայ այնպիսի ազնիւ Պէնկալեան ապրանքներու համար, զոր անոնք զուցէ շահագործման համար հայթայթեն եւ զրկեն, որքան որ կրնան հայթայթել թափթա (ոլորուն մետաքսէ հիւսուածք, որ յետոյ կը ջրուի), սակայն ոչ հում մետաքս, եւ ոչ ալ բամբակաթել, բացի այն պարագայէն, երբ կարելի է գնել անցեալ տարուան եղանակի գիներուն հարիւրին քսանէն երեսուն պակասով»³⁾

1693-4-ին «Պարսից թագաւորը Պարսկաստանի բոլոր մետաքսը տուած է Հայոց, որոնք փոխարէնը պիտի հատուցանէին երեք տարուան մէջ: Գործակատարը (Ընկերութեան ի Պարսկաստան) լիազօրուած էր մետաքսին մէկ երրորդը հայերէն առնել, ի հաշիւ Ընկերութեան, պայմանով որ անոնք համաձայնին մընացեալը Ընկերութեան նաւերով Եւրոպական շուկաները զրկելու: Ասոր պատճառ կը ներկայացուէր, որ Ֆրանսական պատերազմը ընդմիջած է Թուրքիոյ (Ընկերութեան) վաճառականներուն մետաքս ներածումը, որ ապրանքը բարձրացած է թէ՛ գնով եւ թէ՛ պահանջով: Կը յաւելուի նաեւ, որ Անգլիական կերպասը ճուլֆայի հայ վաճառականներուն պէտք է յանձնարարել, պայմանով որ կարելի ըլլայ զանոնք փոխանակել մետաքսով կամ պատրաստ դրամով, կամ նոյնիսկ մէկ երրորդը գրամով եւ երկու երրորդ մետաքսով»⁴⁾

3) Անդ՝ էջ 621, նոյն:

4) Անդ՝ էջ 140-1, երրորդ հատոր: 1691-92-ին դեռ կ'ակնկալուէր որ «եթէ այս (հայերը) ժողովուրդը կրնար Պարսկաստանի բոլոր մետաքսի առեւտուրին տիրանալ, այդ ապրանքը զուցէ կարելի ըլլայ թոյլ տալ Եւրոպա ներածելու Ընկերութեան նաւերով եւ անոնց միջոցով Գործակատարը (Ընկերութեան ի Պարսկաստան) պիտի մղէ Անգլիական

Սակայն, Հայ վաճառականները, իրենց յատուկ շահերն ունենալով, չկապուեցան Ընկերութեան հետ, շարունակեցին Հայէպի վերայով իրենց պահանջը դոհացնել, եւ սերտ կապ պահել Թուրքիոյ Ընկերութեան հետ: 1695-6-ին Անգլիական կերպասը Արեւելեան Հնդկաց Ընկերութեան կողմէ հայթայթուած Հայ վաճառականներէն չընդունուեցաւ ի Նոր Զուլայ:

* * *

ԺԸ դարուն սկիզբներուն մեր նիւթին համար կարեւոր աղբիւր մըն է Tournefort Ֆրանսացին: Ան իր մեծարժէք ուղեգրութեան մէջ ընդհանրապէս կը նկարագրէ Պարսկաստանէն Թուրքիոյ վերայով կատարուած մետաքսավաճառութեան ուղին:

1701 սեպտեմբեր 14-ին ան Կարինէն ճամբայ կ'ելլէ դէպի Թոգատ մետաքսի հայ կարաւանի մը հետ: «Մեր կարաւանը, կը գրէ ան, կը բաղկանայ ոչ աւելի քան երեք հարիւր հոգիէ, գրեթէ բոլորն ալ հայեր, որոնք մետաքս կը տանին Թոգատ, Զմիւռնիա եւ Կ. Պոլիս»¹⁾

Սեպտեմբեր 17-ին Գարապուլազի մօտ «մեզի միացաւ մետաքսի վաճառականներու կարաւան մը, մերինին շափ բազմաթիւ: Էրզուրումէն կուգային, եւ մեզմէ օր մը վերջ մեկնած ըլլալով հանդերձ՝ աճապարած էին այն շուկին պատճառով, ըստ որուն Մանսուլ Փաշա անունով մէկը աւազակապետ եղած է»²⁾

Ուղեգիրը կը նկարագրէ աւազակներուն հետ ունեցած իրենց հանդիպումները եւայլն, որոնք այստեղ մեզ չեն հետաքրքրեր, բացի անկէ, որ ցոյց կուտան Հայ վաճառականներու նիւթարկուած վտանգները այդ ժամանակները:

Մեր ուղեգիրը կը հասնի Թոգատ, որուն Հայ բնակչութեան թիւը 4,000 կը նշանակէ:

բամբակ լայնալաթի վաճառումը, որմէ հազար ծրար, յարմար գոյներով, արդէն զրկուած է»: (Անդ՝ էջ 107-8, նոյն): Հաշիւ մը, որ ,սակայն, չյաջողեցաւ:

1) A Voyage into the Levant, 1699-1702. — London, 1741, Vol. III, էջ 258:
2) Անդ՝ էջ 260: